

**ԱՅԼԸՆՏՐԱՆՔ ՆԵՐԿԱ
ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՈՂԵԼԻՆ**

ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ Ա. Վ.

Աշխարհի առաջին խոշոր տնտեսական ճգնաժամը սկսվեց 1929 թվականին: ԱՄՆ արժեթղթերի շուկան անկում ապրեց, երբ շուկայի միջին ցուցանիշը երկու օր հաջորդաբար իջավ 12.82 և 11.73 տոկոսով: Տնտեսական ծանր իրավիճակը ձգվեց տասնամյակներ: Դրանից դուրս գալու եղանակ առաջարկեց տնտեսագետ Ջոն Մեյնարդ Բեյնսը: Հետևելով Բեյնսի առաջարկներին՝ բազմաթիվ պետություններ ճգնաժամը հաղթահարեցին: Բեյնսի ծրագրում կարևորվում էր պետության դերը պահանջարկը խթանելու գործում:

Ներկայումս աշխարհի երկրների մեծամասնությունը կիրառում է այսպես կոչված «բեյնսյան» կամ «պահանջարկամետ» տնտեսական մոդելը կամ դրա արդիականացված տարբերակները: Մասնավորապես գաղափարը հետևյալն է, որ պետական պարտքի ավելացումը և դրա ներդրումը պետության զարգացման մեջ հանգեցնելու է այնպիսի հնարավորության, որ պարտքը կարելի կլինի մարել: Այս մոդելը համարվում է ամենաարդյունավետը ժամանակակից աշխարհում և, ունենալով բազմաթիվ հիմնավորումներ, ունի նաև իր թերությունները երկարաժամկետ հեռանկարում:

Տնտեսական մոդելի ընտրությունը հաճախ պայմանավորված է լինում իշխող քաղաքական ուժի՝ իշխանության մեջ մնալու ժամկետով: Հաճախ իշխանության եկած նոր կառավարությունը հայտնվում է մի իրավիճակում, երբ անհրաժեշտ է կարճ ժամանակահատվածում բարելավել նախորդներից ստացած «ժառանգությունը», իսկ հաճախ էլ երկիրը դուրս բերել ճգնաժամից: Առավել ևս, որ նորակազմ կառավարությունը, լինելով հասարակության և ընտրողների մշտական ճնշման ներքո, ստիպված է հնարավոր բոլոր միջոցներով անհապաղ իրականացնել սեփական տնտեսական ծրագիրը: Վերոհիշյալ հանգամանքները հաճախ խոչընդոտում են, որ կիրառության մեջ դրվեն նաև այլ, « ոչ պահանջարկամետ» մոդելներ:

Թեև այս նույն մոդելով են շարժվում ինչպես եվրոպական և հյուսիսամերիկյան պետությունները, այնպես էլ աշխարհի երկրների մեծագույն մասը, սակայն դեռևս տասնամյակներ առաջ (1970-ականների վերջ) արդեն փորձեր արվեցին կիրառելու այլընտրանքային տնտեսական մոդելի որոշ տարրեր: Բեյնսյան տեսությունը, ճգնաժամային իրավիճակին ի պատասխան, առաջարկում է որոշակի դրամային և հարկաբյուջետային քաղաքականության փոփոխությունների իրականացում: Ըստ այս տեսության, անհրաժեշտ է հարկաբյուջետային քաղաքականությունը ուղղել հավելյալ պետական ծախսերի զարգացմանը, որոնք կֆինանսավորվեն գանձվող հարկերի ու պարտքի միջոցով: Այս փոփոխության հիմքում ընկած է այն գաղափարը, որ պետական ծախսերը կբերեն համընդհանուր զար-

զացման, քանի որ անընդմեջ գումարներ ներդնելով տնտեսության մեջ՝ հնարավոր է բավականաչափ զարգացնել այն:

Որպես դրամային քաղաքականություն՝ նվազեցվում է կենտրոնական բանկի կողմից առևտրային բանկերին տրամադրվող վարկի տոկոսադրույքը, իսկ հարկաբյուջետային քաղաքականությամբ մեծացվում են պետական ներդրումները / ծախսերը:

Տոկոսադրույքի նվազեցումը դրդում է բանկերին նվազեցնել ավանդների տոկոսադրույքը: Այսպիսի քայլը խրախուսում է մասնավոր սեկտորին պակաս խնայել (քանի որ այլևս պակաս ձեռնտու է դառնում գումարը բանկում պահելը) և հետևաբար ավելի ներդնել: Պետական ներդրումներն ու ծախսերը բարելավում են պետության ենթակառուցվածքները, որոնք իրենց հերթին ավելի սահուն և արդյունավետ են դարձնում յուրաքանչյուր տնտեսական գործունեություն: Նման հավելյալ պետական ծախսերը ֆինանսավորվում են պետական պարտքի ավելացման հաշվին, և երբ ծախսը գերազանցում է եկամուտը՝ առաջանում է պակասուրդ: Այս մոդելի հիմնական փիլիսոփայությունն այն է, որ պակասուրդը կվերացվի պետական ներդրումների շնորհիվ՝ զարգացած տնտեսության հարկային բազայի աճի հաշվին:

Ընդունված է, որ այս տնտեսական մոդելը արդարացնում է հավելյալ պարտքը, քանի որ այն գործում է որպես ֆինանսական լծակ ամբողջ տնտեսության համար և շատ ավելի մեծ համընդհանուր շահույթ է բերում, որն էլ իր հերթին գոյացնում է ավելի շատ հարկեր՝ մարելով առաջացած պարտքը: Հետևաբար, քեյնսյան մոդելը խրախուսում է պարտքի հավերժ ավելացումը՝ տարեցտարի ավելացնելով այն (եթե տնտեսությունը շարունակում է ունենալ պակասուրդ):

Քեյնսյան տնտեսական մոդելը նաև հաշվի չի առնում մրցունակության և բարիքների ստեղծումից գոյացած հարկերի վճարման կարևորությունը:

Տնտեսության անընդմեջ ֆինանսավորումը, սուբսիդավորումը և այլ «անմրցունակ» եղանակների կիրառումը խրախուսող քաղաքականությունը հանգեցնում է անմրցունակ բարիքների ստեղծման: Նման եղանակով «սնվող» բարիքների ստեղծման համար անխուսափելիորեն զալիս է մի պահ, երբ դրանք այլևս հնարավոր չէ ֆինանսավորել, որի հետևանքով դրանք կորցնում են իրենց պահանջարկը, որն էլ իր հերթին վնասում է ամբողջ տնտեսությանը¹:

Մեկ այլ հանգամանք է այն, որ, վճարելով նպաստներ և ստեղծելով պետության կողմից ֆինանսավորված կազմակերպություններ, պետությունը վնասում է ինքն իրեն: Սա նույնպես քաղաքական խնդիր է, քանի որ ակնկալվում է, որ կառավարությունը պետք է նպաստի գործազրկության կրճատմանը: Սակայն վերոհիշյալ մեխանիզմը թեպետ նվազեցնում է գործազրկությունը, միաժամանակ հանգեցնում է բյուջեի հավելյալ ծախսերի, որոնք բարիքներ չեն

¹ Տե՛ս **Porter M.** *On Competition*, Harvard Business Review, Boston, 2008, pp. 171-212.

զեներացնում, չեն նպաստում հարկերի վճարմանը և որևէ ձևով չեն հանգեցնում պետական եկամուտների աճին: Տվյալ դեպքում Քեյնսը շատ լավ թեզ է առաջադրում, որ ճգնաժամային շրջաններից դուրս գալու համար, երբ գործազրկությունը բարձր է, պետությունը պետք է միջամտի և տնտեսությունն ակտիվացնի: Մակայն նույն այդ թեզը չի վերացնում տնտեսության այն թույլ կողմը, որը հենց պատճառ է դարձել ճգնաժամայինի համար:

Սա, իհարկե, չի նշանակում, որ պետությունը չպետք է ունենա տնտեսության զարգացման վրա ուղղակիորեն ազդեցություն չունեցող պետական ծրագրեր, ինչպես, օրինակ, կենսամակարդակի բարելավման, երկրի պաշտպանության և անվտանգության, կենսաթոշակների առավել արդյունավետ օգտագործմանն ուղղված տարատեսակ ծրագրեր: Մակայն պետք է զերծ մնալ այնպիսի ծրագրերից, որոնք, լուծելով մեկ հասարակական խնդիր, միաժամանակ երկարաժամկետ հեռանկարում կարող են պատճառել ծանր տնտեսական վնաս: Ըստ քեյնսյան դասական մոդելի՝ հարկերի նվազեցումը գերխնայողություններից խուսափելու միջոց է, որը կիրառվում է այն դեպքում, երբ տնտեսությունը աճել է ավելին, քան կառավարությունը կարող է ներդնել կամ ծախսել: Վերոհիշյալ մոտեցման հիմքում ընկած է այն գաղափարը, որ հարկերի նվազեցումը հաջող տնտեսավարման պարզևատրումն է և կիրառելի է միայն այն դեպքում, երբ տնտեսությունը առավելագույնս բարվոք վիճակում է:

Ըստ Քեյնսի՝ պետությունը ակտիվ հարկաբյուջետային քաղաքականությամբ ավելի մեծ արդյունքի է հասնում կարճաժամկետ ծրագրավորմամբ՝ խթանելով տնտեսությունը ճիշտ այն ժամանակ, երբ այն դրա կարիքն ունի, ճգնաժամային կամ դեպրեսիոն շրջաններում:

Քեյնսին է պատկանում հետևյալ միտքը. «Երկարաժամկետ հեռանկարում բոլորս մեռնելու ենք» , այլ կերպ ասած՝ ավելի լավ է ունենալ քիչ, բայց այսօր և հաստատ, քան շատ, բայց ապագայում և ոչ այնքան հաստատ²: Այս գաղափարի անընդմեջ կիրառումը վտանգներ է պարունակում: Դա նույնն է, որ բժիշկը բոլոր հիվանդությունների դեպքում փորձի վերացնել հիվանդության ախտանիշները՝ անտեսելով առավել կարևորը՝ հիվանդության հարուցիչը: Թեպետ Քեյնսի գաղափարները երկար տարիներ շատ երկրների պետական գործիչներին խրախուսել են ունենալ պակասուրդով ֆինանսավորված բյուջեներ, այնուամենայնիվ, այն չի կարող կիրառվել անընդմեջ և բոլոր սցենարներում:

Քեյնսի տեսությունը, իհարկե, չի սահմանափակվում միայն բյուջեի պակասուրդային ֆինանսավորումով: Այն ավելի գլոբալ բնույթ ունի, որում շեշտվում է պետության ակտիվ դերը:

Ի հակակշիռ պահանջարկամետ մոդելի՝ 1970-ական թվականների վերջին ԱՄՆ-ում առաջ քաշվեց առաջարկամետ տնտեսական մոդելը: Ըստ պահանջարկամետ տեսանկյան՝ հարկաբյուջետային քաղաքականությունը գործում է պահանջարկի միջոցով՝ փոխելով

² St' u Keynes J.M., Tract on Monetary Reform, Cambridge, 1923, p.80.

սպառման քանակները: Այն անտեսում է առաջարկի ազդեցությունը: Ի հակակշիռ պահանջարկամետ տեսանկյան՝ առաջարկամետ տեսությունը համարում է, որ հարկաբյուջետային քաղաքականությունը գործում է հարաբերական գների փոփոխության միջոցով, որն իր հերթին ազդում է արտադրական խթանների վրա:

«Առաջարկամետի» տեսանկյունից գոյություն ունի երկու հիմնական գործոն, որոնք ազդում են գնի վրա: Առաջինը՝ որքան սպառել և որքան խնայել: Որքան որ անհատը ներդնում է սպառման մեջ ներկայում, այդքանով էլ նա իրեն զրկում է ապագայում նույնքան գումարից ակնկալվող եկամտից: Այդ եկամտի արժեքը կախված է սահմանային հարկի չափից՝ որքան այն բարձր է, այնքան ցածր է եկամուտը: Հետևաբար, բարձր սահմանային եկամուտները սպառումը դարձնում են տնտեսապես նպատակահարմար, որի հետևանքով նվազում են խնայողությունները և հետևաբար՝ ներդրումները:

Առավել պատկերավոր լինելու համար կարելի է հիշատակել 1970-ական թթ. Մեծ Բրիտանիայի սահմանային հարկումը, որը կազմում էր 98%՝ տարեկան 20000 բրիտանական ֆունտը գերազանցող եկամտի համար: Նման տնտեսական իրավիճակում վերին հարկման շեմը գերազանցողների համար խնայելն ու ներդնելը դառնում էր կատարյալ անտոտություն, իսկ այդ ժամանակ նման մարդկանց թիվը Մեծ Բրիտանիայում 750000 էր:

Այդ ժամանակ թանկարժեք «Ռոլս Ռոյս» ավտոմեքենան արժեր մոտ 54250 բրիտանական ֆունտ: Այն ձեռք բերելու որոշման մեջ դեր էր խաղում այն հանգամանքը, որ նույն գումարը ներդրվելու պարագայում ենթարկվելու էր գերհարկման: Եթե ներդրումը կատարվեր 17% եկամտաբերությամբ, ապա տարեկան այն կվերադարձներ 9222 բրիտանական ֆունտ, բայց հարկերը վճարելուց հետո այդ գումարից կմնար ընդամենը 461 ֆունտ: Այսինքն՝ վերին հարկման շեմին հասած քաղաքացին ընդամենը հրաժարվում էր տարեկան 461 բրիտանական ֆունտ եկամտից, որպեսզի գներ թանկարժեք ավտոմեքենա: Հենց դա էլ պատճառ էր, որ «Ռոլս Ռոյսերի» քանակը կտրուկ աճեց Բրիտանիայի փողոցներում, որը ոչ թե բարեկեցության նշան էր, այլ բարձր սահմանային հարկման³:

Թեպետ սա ծայրահեղ օրինակ է և նույնիսկ կարող է անհեթեթ թվալ, այն գործում է նաև ավելի ցածր հարկման դեպքերի համար:

Գների վրա ազդող երկրորդ կարևոր գործոնը ժամանակի բաշխումն է աշխատանքի և հանգստի միջև: Այսինքն՝ ինչպես է մարդը բաշխում իր ազատ ժամանակը հավելյալ եկամուտ վաստակելու և չաշխատելու միջև: Ներկայացնենք մի իրավիճակ, որտեղ սահմանային հարկման տոկոսադրույքը կազմում է քսանհինգ տոկոս: Ամեն հավելյալ աշխատանքային օրվա դիմաց վարորդը ստանում է 10000 դրամ, որից կարող է իրեն պահել 7500-ը: Ենթադրենք, վարորդը կարիք ունի իր տունը ներկել: Այդ աշխատանքը կարժենա օրական 8000 դրամ: Այս իրավիճակում վարորդը պետք է որոշում

³ St u Roberts P.C., *The Supply-side Revolution*, London, 1984, p. 36.

ընդունի, թե ինչն է իր համար ավելի ձեռնտու: Ակնհայտ է, որ եթե վարորդը մեկ օր հավելյալ չաշխատի, և ինքը կատարի աշխատանքը, այսինքն՝ չկատարի 10000 դրամ գնահատվող ծառայություն և չվճարի ներկարարին, ապա կինայի 500 դրամ: Հետևաբար չեն ստեղծվում բարիքներ, և չեն տրամադրվում ծառայություններ, որոնք նվազեցնում են ՀՆԱ-ն, և համապատասխանաբար հարկային բազան նվազում է պոտենցիալ 18000 դրամով (10000, որ կստանա վարորդը, և 8000-ը, որ նա կվճարի ներկարարին)⁴: Ցավոք, նման «հարկերի պատճառած» խնայողությունները հնարավոր չէ գնահատել: Վերոնշյալ օրինակը ցույց է տալիս, թե ինչպես ներկա հարկային բեռի պարագայում հարկերի նույնիսկ փոքր նվազեցումը կարող է տալ շատ ավելի մեծ արդյունքներ, քան կարող է թվալ առաջին հայացքից: Հարկաբյուջետային քաղաքականությամբ պետությունը պետք է խրախուսի տնտեսական զարգացումը: Սակայն հարկերի պարզ նվազեցումը չի կարող նպաստել դրան, միայն դրանց խելամիտ օգտագործումը և ուղղորդումը արդյունավետության բարձրացման նպատակով կարող է հանգեցնել երկրի համընդհանուր բարելավման⁵:

Հարկերը, որպես խրախուսման գործիք, կարելի է օգտագործել տնտեսության բոլոր բաղադրիչների համար: Հարկերը պետք է լինեն հավելյալ եկամուտ ստեղծելուն նպաստող խրախուսման գործիք, իսկ դա հնարավոր է իրագործել՝ ունենալով աստիճանաբար նվազող հարկերի տոկոսադրույքներ և համապատասխան հարկային քաղաքականություն: Նման քաղաքականությունը առավել գրավիչ է և կարող է հանգեցնել շատ լուրջ տնտեսական զարգացման և երկրի արտադրած բարիքների մրցունակության բարձրացման: Այն կվերականգնի առաջնային նվազեցման հետևանքով զոհաբերված պետական եկամուտը, որն իր դերը կունենա ապագա տնտեսական խնդիրները կանխարգելելու գործում:

Հաճախ տնտեսագիտական գրականության մեջ օրինակ է բերվում, թե ինչպես է պետությունն իրականացում հակացիկլային քայլեր: Այն ուղղորդված է հարկաբյուջետային քաղաքականության տատանումների շնորհիվ նվազեցնելու կամ մեծացնելու ներդրումներն ու խնայողությունները, ինչպես նաև կրճատելու գործազրկությունը: Սակայն, ինչպես արդեն նշվեց, սրանք կարճաժամկետ լուծումներ են, քանի որ արագ արդյունք ապահովելով՝ դրանք հաճախ արմատապես չեն վերացնում կամ կարգավորում տնտեսության հիմքում ընկած խնդիրները⁶:

Ավելին, հակացիկլային քաղաքականությունը կարող է «սառեցնել» տնտեսությունը, երբ այն չափից ավելի արագ է աճում, սակայն դա զգուշավորության սկզբունքով առաջնորդված քաղաքա-

⁴ Նույն տեղում, էջ 38:

⁵ Sté u Bouchard M., *A Rising Tide Lifts All Boats*, 2006, TownHall.com site, <http://www.unz.org/Pub/TownHall-2006sep-00004>

⁶ Sté u Abel A. & Bernanke B., *Macroeconomics*, Boston, Massachusetts, 2011, pp. 109-121.

կանությունն է, որն արհեստականորեն դանդաղեցնում և խոչընդոտում է զարգացման տեմպ ունեցող տնտեսությունը: Որպես «սառեցման» քաղաքականություն՝ պետք չէ շրջանառվող դրամային միջոցները նվազեցնել՝ ի պատասխան տնտեսական աճի: Պետությունը, որպես նաև մասնավոր սեկտորի վրա ազդող ու հովանավորող, ունի բոլոր լծակները հարմարավետ պայմաններ ստեղծելու խոշոր, ողջ տնտեսության վրա ազդող ներդրումային ծրագրերի համար: Օրինակ՝ հայ-վրացական սահմանի միջոցով առևտրով զբաղվող ընկերությունների գերշահույթները կարող են ուղղորդվել դեպի նոր, հարմարավետ, գերարագ և վճարովի մայրուղու կառուցմանը այդ հատվածի վրա: Այդ ճանապարհի ամբողջ շահույթը կանցնի ներդրողներին, իսկ նոր ենթակառուցվածքից կշահի ամբողջ տնտեսությունը, և պետական եկամուտները կաճեն, քանի որ մայրուղու շնորհիվ ստեղծված հավելյալ բարիքներից կաճի նաև հարկային բազան: Անհրաժեշտ է ունենալ ծրագրեր, որոնք կլինեն անընդմեջ զարգացման մեջ և կունենան նախագծային առաջարկներ, որպեսզի որևէ ներդրումային հնարավորություն բաց չթողնվի:

Այս ամենից կարելի է եզրահանգել, որ պետական քաղաքականությունը պետք է հիմնված լինի ավելի հիմնարար լուծումների վրա: Բիարկե, այսօր, առավել քան երբևէ, դժվար է գտնել նման լուծումներ արդի աշխարհի դինամիկ տեմպերով փոփոխվող տնտեսության մեջ: Հայաստանի ներկա տնտեսական իրավիճակում անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել պետական քաղաքականությունը, մասնավորապես հարկային քաղաքականությունը ուղղորդելու դեպի համընդհանուր տնտեսական զարգացում:

Ներկայի «պահանջարկամետ» քաղաքականությունը ավելի է վատացնում առանց այդ էլ մշտապես դարձած պակասուրդի աճը և դրա հետևանքով նմանապես աճող պետական պարտքը, որը միայն մեծացնում է գալիք սերունդների վրա բարդվող բեռի չափը: Հարկային քաղաքականությունը դեպի «առաջարկամետ» մոդելը ուղղորդելու դեպքում հնարավոր է եղած պետական ներուժով խթանել տնտեսությունը շարունակական և դինամիկ աճի:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «առաջարկամետ» տնտեսական մոդելը այլընտրանք է «պահանջարկամետ» տնտեսական մոդելին՝ միաժամանակ լինելով տնտեսական կարևոր և հեռանկարային մոդել, անհրաժեշտություն է առաջանում դրա հետագա և ավելի խոր ուսումնասիրության համար:

АЛЬТЕРНАТИВА ДЕЙСТВУЮЩЕЙ НАЛОГОВОЙ ПОЛИТИКИ

ТЕР-ГЕВОНДЯН А. В.

Резюме

Ориентированная на спрос экономическая политика привела большинство правительств к выработке краткосрочных перспек-

тив в планировании фискальной политики. Суть кейнсианской политики заключается в том, что она поддерживает аккумуляцию долга с целью финансирования государственных трат, ставшую хронической глобальной проблемой, игнорирующей возможный потенциал в случае изменения налоговой политики. Соответственно экономическая теория предложения диктует необходимость держать налоговую политику в фокусе работы правительства, что приведет к улучшению глобальной экономики в долгосрочной перспективе. Уменьшение ставок налогообложения во всех сферах экономики вкупе с политикой, направленное на поддержку инвестиций, увеличит общую налоговую базу в долгосрочной перспективе, улучшит экономику и уменьшит государственный долг того или иного государства. Исходя из потенциального эффекта экономической политики, направленной на предложение, необходимо исследовать тот потенциальный эффект, который она может иметь в определенных странах при условии ее интеграции в действующую финансовую политику.

ALTERNATIVE TO THE CURRENT TAX POLICY

A. TER-GEVONDYAN

Abstract

Demand-sided economic policies have led the majority of governments to have short term outlook fiscal policies. In essence Keynesian policies promote the accumulation of debt in order to finance current governmental expenses, which have turned into a chronic global issue and disregard the potential of tax policy changes. Conversely, the supply-side approach offers to keep the tax policy in the focus of governmental activities aimed at bettering the overall economy in the long run. A lower tax rate across all economic activities coupled with policies aimed at promoting investment will increase the overall tax base in the long run, improve the economy and reduce sovereign debts. Taking into account the potential effects of a supply-sided tax policy, it is worthwhile to study the potential effect it could have on specific countries if integrated with current fiscal policies.